

«Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
ՊՈԱԿ

« ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր,թ.գ.դ.,պրոֆեսոր  
\_\_\_\_\_ Գ. Կ. Խաչատրյան

“\_25\_” \_12\_ 2009թ.

### Կանոնակարգ

ՎՊՄԻ-ի «Դասախոսը ուսանողների աչքերով»  
արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում  
(արձանագր. թիվ \_11\_ “\_25\_”\_12\_ 2009թ.)

## 1. Ընդհանուր դրույթներ:

- 1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետև՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ՎՊՄԻ-ի Ուսանողության կողմից ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
- 1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է ՀՀ «Կրթության մասին» օրենքի 28 հոդվ. 4-րդ կետի պահանջների հիման վրա և համարվում է ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսերում:
- 1.3. Ուսանողական հարցման կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ինստիտուտի գիտական խորհրդը:

## 2. Ուսանողական հարցման անցկացումը:

- 2.1. Ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակ (հոկտեմբեր-նոյեմբեր, մարտ-ապրիլ, հեռակա ուսուցման համակարգում՝ հունիս ամիսներին) այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է դասախոսը: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև պետական քննությունների սկիզբը:
  - 2.2. Հճամայա ժամկետով ընտրված դասախոսի համար անցկացվում է առնվազն 3 հարցում:
  - 2.3. Հրավիրված դասախոսների համար հարցում անցկացվում է առնվազն մեկ տարվա աշխատանքայի փորձ ունենալու առկայության դեպքում:
  - 2.4. Ուսանողական հարցումն կազմակերպվում է ՎՊՄԻ-ի «Դասախոսն ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող հանձնախմբի / կազմը վավերացվում է ռեկտորի հրամանով/ ուսումնական վարչության կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:
  - 2.5. Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1)` 5 միավորանոց սանդղակով:
- Ուսանողական հարցումն անանուն է:
- 2.6. Ուսանողական հարցումն անցկացվում է դասերի հաշվին, ոչ պակաս քան 15 հոգուց բաղկացած խմբերում: Զեաթերթերը ստորագրվում են հարցումն անցկացնողների կողմից:

2.7. «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցումն անցկացնող անդամին միանում է նաև տվյալ դասաժամի դասախոսը:

2.8. Հարցման ձևաթերթերի բաժանումը, հավաքումը և ուսվարչությանը հանձնումը վավերացվում է ստորագրություններով (ձևաթերթ 2):

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ուսումնական վարչության կողմից:

3.2. Գնահատման հարցաթերթերը պահվում են 5 տարի՝ ուսումնական վարչությունում:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսանողական հարցման արդյունքների ամփոփաթերթը ուսումնական վարչությունը ներկայացնում է համապատասխան ֆակուլտետին և ամբիոնին:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և խորհրդական ուղղված տվյալ դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստում:

4.3. Դասախոսն իրավունք ունի ուսվարչությունում ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքների՝ (ամփոփաթերթ):

4.4. Մրցույթների ժամանակ հարցման արդյունքները տրամադրվում են մրցութային հանձնաժողովին:

4.5. Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ֆակուլտետում:

4.6. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում: